# *ՀԱՅՏԱՀՐԱՎԵՐ*

**ՀՀ Կրթության բարելավում ծրագիր**

**Ֆինանսավորման աղբյուր՝ ՎԶՄԲ Վարկ No. 8342-AM**
**ՄԶԸ Փոխառություն No. 5387-AM**
**ՄՄԳ՝ ASIPCS-ICB-2/2018**

1. Հայաստանի Հանրապետությունը Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից (ՎԶՄԲ) և Միջազգային զարգացման ընկերակցությունից (ՄԶԸ) ստացել է վարկ, և նախատեսվում է, որ այդ վարկային գումարի մի մասն օգտագործվելու է ՆՄՀ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «ՍՊՈՐՏ ԿԱԲ» գիտահետազոտական կենտրոնի համար լաբորատոր սարքավորումների մատակարարման պայմանագրից բխող վճարումները կատարելու համար:

2. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը հրավիրում է իրավասու հայտողներին փակ ծրարով հայտեր ներկայացնել «ՍՊՈՐՏ ԿԱԲ» գիտահետազոտական կենտրոնի համար ստորև ներկայացված լաբորատոր սարքավորումներ մատակարարելու համար:

Ապրանքների մանրամասն նկարագրությունն ու տեխնիկական պահանջները տրված են **Մրցութային փաթեթի Բաժին VII-ում:**

Ապրանքների համառոտ նկարագիր՝ քանակ, առաքման վայր.

| # | Նկարագրություն | Քանակը |
|---|---|---|
| 1. | Էլեկտրասրտագրիչ /ԷՍԳ/ | 1 հատ |
| 2. | **Կինեմատիկ բիոմեխանիկական հետազոտական համակարգ (ներառյալ ծրագրային ապահովումը)** | 1 համալիր |
| 3. | **Սրտաշնչառական բեռնվածության ախտորոշման ստացիոնար համակարգ (ներառյալ ծրագրային ապահովումը և հարակից սարքավորումները)** | 1 հատ |

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ, ՀՀ, ք. Երևան, 0070, Ալեք Մանուկյան 11:

Որակավորված համարվելու համար հայտողը պետք է ցույց տա ֆինանսական վիճակի կայունություն և անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներ՝ առաջարկվող պայմանագրի պահանջները բավարարելու համար: Մասնավորապես, վերջին երեք տարիների համար աուդիտի կողմից հաստատված ֆինանսական հաշվետվությունների և աուդիտորների կողմից տրված եզրակացությունների հիման վրա, ապահովելով, որ՝

(i) միջին տարեկան շրջանառությունը վերջին երեք տարիների համար առնվազն պետք է լինի համարժեք հայտի արժեքին.

(ii) վերջին երեք տարիների ընդհանուր ակտիվների հարաբերությունն ընդհանուր պարտավորություններին (առանց կապիտալի) պետք է լինի 1-ից մեծ.

Մասնակիցը պետք է ներկայացնի վավերական ապացույցներ, որոնք ցույց են տալիս, որ այն համապատասխանում է հետեւյալ պահանջներին.

ա) լինի իրավաբանորեն գրանցված կազմակերպություն.

բ) ներգրավված լինի սարքավորումների մատակարարման ոլորտում առնվազն 5 տարի ժամկետով (սկսած 2013թ. հունվարից).

գ) վերջին 5 տարիների ընթացքում (սկսած 2013թ. հունվարից) հաջողությամբ իրականացրած լինի սարքավորումների մատակարարման առնվազն 2 պայմանագիր, յուրաքանչյուրը՝ առնվազն ներկայացված հայտի արժեքի չափով:

Հայտողը պետք է ներկայացնի փաստաթղթային ապացույց, որը կհավաստի, որ առաջարկվող ապրանքների տեխնիկական հատկորոշիչները համապատասխանում են **Մրցութային փաթեթի Բաժին VII-ում** պահանջվող տեխնիկական չափանիշներին:

3. Մրցույթն անցկացվելու է համաձայն Համաշխարհային բանկի «Գնումներ՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի փոխառություններով և Միջազգային Զարգացման Ընկերակցության վարկերով» (հունվար 2011) ուղեցույցի՝ Միջազգային Մրցակցային Գնումների ընթացակարգի համաձայն, մրցույթին կարող են մասնակցել բոլոր իրավասու հայտողները:

4. Իրավասու շահագրգիռ հայտողները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամից յուրաքանչյուր օր, բացի շաբաթ, կիրակի և տոն օրերից, ժամը 9:00-ից - 15:00-ը (տեղական ժամանակով) ստորև բերված հասցեով:

5. Շահագրգիռ հայտողները կարող են գնել մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը անգլերեն լեզվով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամից, գրավոր դիմումի համաձայն՝ կատարելով անհատույց վճարում 29000 ՀՀ դրամ: Վճարման ձևը բոլոր հայտողների համար բանկային փոխանցումն է՝ հետևյալ բանկային հաշվին.

**<u>Ստացող</u>** - «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ,

«Արարատբանկ» ՓԲԸ

h/h 1510022984960100,

SWIFT code - ARMCAM 22

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև բերված հասցեով՝ մինչև 2018թ. Ապրիլի 16-ը, ժամը 15:00-ն (տեղական ժամանակով): Հայտերի էլեկտրոնային ներկայացումը չի թույլատրվում: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն հայտողների ներկայացուցիչների ներկայությամբ՝ ստորև բերված հասցեով, 2018թ. Ապրիլի 16-ին, ժամը 15:00-ն (տեղական ժամանակով):

7. Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն Հայտի ապահովման հայտարարագրով:

8. Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան 0070, Ալեք Մանուկյան 11

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» 213 սենյակ

Հեռախոս՝ (+37493) 543360

Ֆաքս՝ (+37441) 554104

Էլ. փոստ՝ qad@asipc.am

Վեբ կայք՝ www.asipc.am